

Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի  
2017թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/3 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ

Ա. Հ. Սիմոնյան

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման (այսուհետև՝ շրջանավարտների հարցման) կանոնակարգը սահմանում է շրջանավարտների՝ համալսարանում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատման կարգը:

1.2. Շրջանավարտների հարցումը ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է:

1.3. Շրջանավարտների հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՊՀ գիտական խորհուրդը:

### 2. Շրջանավարտների հարցման անցկացումը

2.1. Շրջանավարտների հարցումն իրականացվում է առցանց եղանակով և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի ու մագիստրատուրայի ավարտական կուրսերում՝ փետրվար, հունիս և հուլիս ամիսներին:

2.2. Հարցմանը շրջանավարտը կարող է մասնակցել ցանկացած վայրից՝ օգտվելով ԵՊՀ ուսանողական անհատական վիրտուալ տիրույթից, մուտք գործելով համալսարանական իր էլեկտրոնային փոստ:

2.3. Շրջանավարտների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում շրջանավարտը 0-5 միավորանոց գնահատման սանդղակով պատասխանում է առաջադրված հարցերին:

2.4. Հարցումը կազմակերպում և վերահսկում են ուսումնամեթոդական վարչությունը և ֆակուլտետները:

2.5. Շրջանավարտները հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների համար հատկացված հատվածում կարող են նաև ներկայացնել կրթական ծրագրերի բարելավմանը միտված իրենց առաջարկները:

### **3. Շրջանավարտների հարցման արդյունքների մշակումը և օգտագործումը**

3.1. Շրջանավարտների հարցման արդյունքները մշակվում են տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

3.2. Հարցումների արդյունքներն ամփոփվում և վերլուծվում են համապատասխան տարեկան զեկույցում, որը պարունակում է եզրակացություններ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության տարբեր ասպեկտների վերաբերյալ, ինչպես նաև կոնկրետ առաջարկություններ ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումներին՝ իրենց ոլորտներում գործընթացների բարելավման ուղղությամբ:

3.3. Հարցման արդյունքներն ամեն տարի քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում, այնուհետև համալսարանի գիտական խորհրդում՝ համալսարանի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

3.4. ԵՊՀ այն ստորաբաժանումները, որոնց գործունեության վերաբերյալ նշված են թերություններ, զեկույցի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում ԵՊՀ ղեկավարությանն են ներկայացնում իրենց աշխատանքի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագիր:

3.5. ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը վերահսկում է բարելավման գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը:

3.6. Հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

Հավելված 1

ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ  
շրջանավարտների գնահատման  
ՀԱՐՑԱԹԵՐԹ – 2016

Սիրելի շրջանավարտ, այս հարցման նպատակն է բարելավել կրթության որակը մեր համալսարանում: Ձեր անկեղծ և անաչառ կարծիքը կնպաստի այդ ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելուն և իրականացնելուն:

**1. Ընդհանուր տեղեկություններ**

**1.1. Նշեք Ձեր ֆակուլտետը (կենտրոնը)**

**1.2. Սեռը** Ար\_\_\_ Իգ\_\_\_

**1.3. Ուսուցման ո՞ր համակարգում եք սովորել** Առկա \_\_\_ Հեռակա \_\_\_

**1.4. Կրթական ո՞ր աստիճանն եք ավարտել** Բակ. \_\_\_ Մագ. \_\_\_

**1.5. Կրթական ծրագիրը**

0	0	1	2	3	4	0	1	2	3	4
1	5	6	7	8	9	5	6	7	8	9

**1.6. Պատրաստվո՞ւմ եք շարունակել Ձեր ուսումը** Այո \_\_\_ Ոչ \_\_\_

**1.7. Ձեր ուսումնառության միջին որակական գնահատականը (ՄՈԳ)**

8-10 \_\_\_ 14-16 \_\_\_

11-13 \_\_\_ 17-20 \_\_\_

**1.8. Հայտնի՞ է արդյոք որտեղ եք աշխատելու** Այո\_\_\_ Ոչ\_\_\_

**1.9. Իսկ այժմ Դուք աշխատո՞ւմ եք**

Աշխատում եմ մասնագիտությամբ \_\_\_

Աշխատում եմ այլ մասնագիտությամբ \_\_\_

Չեմ աշխատում \_\_\_

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ** [2],[3],[4],[5], որտեղ [2]-ը ամենացածր գնահատականն է (անբավարար), [3]-ը՝ բավարար, [4]-ը՝ լավ, [5]-ը՝ ամենաբարձր (գերազանց):

Պատասխան չունենալու կամ դժվարանալու դեպքում նշել [0]:

## **2. Ձեր բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից**

- 2.1. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է նպաստում մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը
- 2.2. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է տալիս տեսական գիտելիքներ
- 2.3. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է տալիս գործնական հմտություններ
- 2.4. Ուսումնառությունը Համալսարանում որքանո՞վ է ապահովում օտար լեզուների իմացություն
- 2.5. Որքանո՞վ էին ընդհանուր առմամբ օգտակար մատուցվող դասընթացները
- 2.6. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը
- 2.7. Ձեր գիտելիքները որքանո՞վ է օբյեկտիվ գնահատվել
- 2.8. Որքանո՞վ է օբյեկտիվ ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն)

## **3. Ձեր բավարարվածությունը Համալսարանի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից**

- 3.1. Լսարանների վիճակից և կահավորանքից
- 3.2. Համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից
- 3.3. Համալսարանի համացանցի (ինտերնետի) մատչելիությունից
- 3.4. Համալսարանի կարիերայի կենտրոնի աշխատանքի արդյունավետությունից
- 3.5. Ուսումնական լաբորատորիաների սարքավորումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից (հարցին պատասխանում են միայն ֆիզմաթ և բնագիտական մասնագիտությունների շրջանավարտները)
- 3.6. Գրադարանում և ընթերցասրահներում տրամադրած ժամանակակից մասնագիտական գրականությունից
- 3.7. Գրադարանի ընթերցասրահների վիճակից և կահավորանքից
- 3.8. Գրադարանի և ընթերցասրահների աշխատաժամերից և սպասարկումից

## **4. Ձեր բավարարվածությունը Համալսարանական միջավայրից**

- 4.1. Որքանո՞վ եք գոհ
  - 4.1.1. Համալսարանի ղեկավարությունից
  - 4.1.2. Ֆակուլտետի ղեկավարությունից
  - 4.1.3. Պրոֆեսորադասախոսական կազմից
  - 4.1.4. Ուսանողական կառույցներից (Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն)
- 4.2. Որքանո՞վ են արդյունավետ աշխատում ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերը և մեխանիզմները

## **5. Ձեր կարծիքը կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ**

- 5.1. Արդյոք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացե՞լ եք գնահատական (ստուգարք) **Այո-Ոչ-**
- 5.2. Արդյոք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացե՞լ եք գնահատական (ստուգարք) **Այո-Ոչ-**
- 5.3. Արդյոք ուսումնառության ընթացքում հարկադրվա՞ծ եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով **Այո-Ոչ-**

## **6. Ձեր ընդհանուր գնահատականը ԵՊՀ-ում ստացած կրթությունից**

- 6.1. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ-ում ստացած Ձեր կրթությունը
  - 6.2. Խորհուրդ կտա՞ք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ **Այո-Ոչ-**
- Այլ կարծիքներ և առաջարկներ.**

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար